

Այդ ծանօթութիւնները աստ կը զադարեցնեմք, զի խւրաքանցիւր եկեղեցւոյ նուիրապետութիւնն քննիլ և շարադասել չէ միտուլնիս, այլ միայն Հայոց աթոռոյն վրայ խօսիլ և անոր դիրքն, իշխանութիւնն, և նուիրապետական աստիճանն որոշել ի բաղգառութիւն նուիրապետութեան այլոց եկեղեցեաց :

( Յարշագիւն )

## ՊԱՏՄԱԿԱՆ

### ՀԱՅՈՍԴԱԿԵՐ ՏԵՂԵԳՐՈՒԹԻՒՆ

#### ՀԱՅԻ ԲԱՏԱՅԱՑ

ԱՇԽԱՐՀԱՀՈՎԱԿԱՎԱՆԻՑ

#### ԱՐԲՈՅ ՆՇԱՆԻ.

«Հեախօսութիւնն լուսաբանումէ ազգի անցեալ պատմութիւնն, որ համումէ մեզ մատենադրութեամբ, մնացեալ յիշեցուցանող դեռ անցինց արծանադրութեամբ եւ մերձակայի ժաղովրդական աւանդութեամբ: . . . Նորա մեծ ծոռայութիւն արած կյանձին ազդին եւ գրակրոնութեան, եթէ հոգային մեր մնացեալ յիշուտակարաններն ամրողջութեամբ պահպանել: եւ ջանային հնութեանց նկարագիրներն եւ ործանադրութիւններն ընծայեն ազգի բանառւրմերին ազգի անցեալ պատմութիւնն մշակելոյ համար: » Մեղ. Հայութանի 1875 № 37:

#### ՅՈՒՊԻԱԾ Ա.

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԻՆ.

Հայութանի \*).

Հազրատ գիւղ պատուական բատ զրից և բատ ապահովութեան գուանի առ Դէքէզայ գետով ի նահանգին Տփխիսայ ի գաւ առակին Բօրչալուի ի հնումն Գուգալք նահանգի յաշխարհին Սեաւոր-

(\*) Բարդ բառս ելեալ ի Հայութ անուանէ և ի Առեւ բայէ նշանակէ ասոզ զարդը զորոգպիթ կամ զթակարդ աշխարհի: Ճգնաղզեաց կրօնաւորքն մե-

զետց. յարեւելից և ի հարաւոյ պատեալ է բարձրածայր լեռտմբք և քարաժայութագոր, իսկ յարեւմովից և ի հիւսիսոյ միապալալ քարաժայութեառն պարսպօքէն շրջափակեալ ունելով զգիս զն։ յօրինէ զնա իբրև զանառիկ բերդ։

Դիբք գեղջն է բաւական յարմարաւոր ի վերայ զաշտաձեւ բրւոյ և ստորոտս լեռանցն Տէրտւնականի և Սուրբ Առանոյ որք գեղցիցի իմն շքեղազարդեն զայս զիւղ ամբարձուղէշ մայրիւք և զանազան պաղաքեր ծառովք և մացառոք։ Յդ սորա է բարիխառն լոյժ, և ջուրն առողջարար և ցուրաս բոխեալ ի զանազան ականակիտ աղքերց։ Անդագար հնչէ աստ զեփիւռն զավարար ի հիւսիսոյ և ի բարձրածայր լեռանցն, որք ընդգրկեալ ունին զգիւղո զայս։ Բնակիչք ի սմա համարին ոչ աւելի քան զյիսուն գերդառանս, ամենեքեան ուզգափառ բուն առողելական Հայք բայց ինուածք տանց և սենեկաց նոցա չեն յարմարաւոր այլ իւսոն ի խոռոն և անձեւ բաց ի քանի մի ականաւոր տանց։

Դաշտք, ձորք և լեռինք Հաղբատայ տուաս պաղաքերա թեսմիք իւրեանց մատակարարեն զիւղականաց զյաճախութիւն արմբռաւեց, Երկրազործութիւն տաւարածութիւն և խաչնարածութիւն են առաջին պարապմունք զիւղականաց։ Ազկու զարեր այզիքն Հաղբատայ են իսկական աղբիւրք հարստութեան բնակչաց, ամենայն զերդաստան ունի զառանձին այգիս ի Հաղբատաձար և ի Երդաձոր, որք և քաջ զիւնեն զարչեստ այզեգործութեան և զինէշինութեան։ Պտուղք այզեստանեայց նոցա են՝ խազոզ, փրնձոր, տանձ, սերկելի, ծիրան, ընկոյզ, նառն, կաղին, զեղձ, սոլոր, հոն, բալ, թութ, զկեռ, մամուխ, կեսառ, զամասի, տրմու և այլք։ Անտառք բարձրուղէշ ծառոցն կաղնի, հաճարի, բոխի, հացիքի, լորի, գէնի (եղելին), թզկենի, թեղի, զաժի և բարդի (սօս) ընձեռեն զիւղականաց զերանս, նիւթս պէս պէս շնութեանց և այլ սլիտոյից։ Բազումք են տեսակք քարանց, յո-

նաստանիս զայս անուն ետուն հոչակաւոր վանիցն, յօրմէ և զիւղն յապոյն անուն կրօնաւորանոցին կոչեցաւ Հաղբատ։ Բայց թէ յի՞նչ անուն կոչիւր այս զիւղ նախ քան զծ։ Ք. ի ժամանակս հեթանոսութեան անդո՛չ գտանեմ զստոյզ տեղեկութիւն ի հին աւանդութեանց կամ ի ժամանակագրաց ի բացատրութիւն հնոյ անուանակոչութեան զեղջա, քանզի Հայք անունն ի կէս Թ. զաբուն միայն Միշատակի ի զիրս նախնի մատենացաց մերց։

րոյ զառաջին տեղի ունի կապոյտ ործաքարն ամբապինդ, որով կուռւցեալ է վանքն Հաղբատայ, Են եւս ի մէջ լերանցն Հաղբատայ անյայտ հանք ունիւոյ, արծաթոյ, պղնձի և այլոց. հետաքըրքիոք դիւրեաւ կարեն գտանել դայն հանքատեղիս:

Բաց ի յոլով ականուկիտ աղքերաց գտանին ի ստորոտ գեղջն երեքին գետք՝ առաջնոյն անուն կոյի Դէքէդայ\*) որ բղխէ ի լերանցն Լոռոյ ի հարուոյ ընդ հիւսիս և իի է համեղաճաշակ կտայոյ և պէս պէս ձկամբք, երկրորդ գետակն Զաղացի ֆուր կոչեցեալ բղխէ ի լերանցն Նախրաշէնայ և Ամիր—Զաքարայ և ոռոգանէ զայգիս Հաղպատաձորոյ: Խոկ երրորդ գետակն կոչեցեալ Թերդկայ ջուր, նոյնալէս ոռոգանէ զայգիս, եղեալս ի Բերդկաձոր: Մերձ ի գիւղն է Սեղիք կոչեցեալ առուտեկն, որ մատակարարեալ զումակ անսանոց՝ իջանէ յոռոգումն իմս հայրական այգւոյն որ ի Զաղացաձոր:

Հին պատմագիրք մեր զնեն զՀաղբատ ի սահմանս Լոռի քաղաքին, յորմէ երեւի թէ սահման այսր քաղաքի ձգիւր մինչեւ ց՛նւտի գաւառ, որով միաբանին ընդ բանից Ասողկայ գլ. 8. «Յաւուրս սորս (Աշուայ ողորմածի) շինեցան կրօնաւորանոցք ճրգնուորականոց տեղիք Սեաւորդեաց աշխարհին, որոց երկոցունց անուանքն Հաղբատ և Սանահին»: Ընդարձակօղն Վարդանայ սշխարհագրի յոյս Զորագետ ակնարկեալ տոէ «ի վերայ Սեաւորդեաց Զորագետին է շինեալ հոյակապ և հոչակաւոր սուրբ ուխոն Հաղբատ, իսկ Վարդան աշխարհագիր գրէ»: Տաշիր Լոռի է, ուր կոմ սուրբ ուխորդն Հաղբատ և Սանահին»: Սեաւորդիք ըստ բանի Ասողկայ բնակեին յնւափ նահանգի մերձ ի սահմանս Գուգարայ, յորոց բազումք ի Սեաւորդեաց հոտուածովք գաղթեցին յայլ և այլ գաւառու որպէս ի Տաւուշ, զոր Վարդան Սեաւորդեաց զաւառ կոչէ, որոց բնակիչք այժմ ևս կոչեն Թօվուղ (զալեցիք) և Նամշաղին: Խոկ վտան Գուրգենայ\*) կրտսեր եղրօրն Ամիասայ Բ. տոէ, «Նւ կրտսեր եղբայրն Ժառանգէ զՏաշիր Սեաւորդւովքն Զու-

(\*) Սորաբոն յաշխարհագր. գլ. ԺԱ. Էջ Դ. յիշէ զանուն գետոյս «Սանդօրանէ»: Վախուշտ աշխարհագիր Վրաց կոչէ Գէքեդոյ. որ ըստ բարբառոյ թօւրքաց նշանակէ գետ կամ ջուր լեռնական. իսկ ի զիրս մատենագրաց մերոց այս գետ անուանի Աւաւորդոց քեզ, Զորչ քեզ: Լուսոյ քեզ, այլ այժմ ի բնակչաց տեղւոյն առհասարակ կոչի մէջ չը-ը:

բագետին և զեայտն . . . ի գաւառն Տաշրաց և այլ բերդք անուանիք եհաս Գուրգենաց զօր Վիրք Աօմիւէին կաշեն:

Ի գրուածոց ասաի մարթ է իմանալ, իւ է Վարդան Ազգ Սեաւորդեաց Զորագետին ասելովն, բաժմնէ զնոսա ի Սեաւորդեացն Աւտի գաւառի և Տաւուշի. բայց բաց յայուննէ երրէք Գուրգէն շունէր ընդ իշխանութեամբ իւրով զմասն յիշեալ նահանգի. այլ որդի նորու Դաւիթ անհօղին ի վերջոյ տիրեաց այնք մասին և ամենայն երկրին Աղուանից: Աւսաի Սեաւորդիք Զորագետին առանձնակի հատուածովք գաանելին ի գաւառու Գուգարաց ի Զորագիոր, սցմեան Սաւզուձոր անուանեալ գաշտաձորին և ոչթէ յՈւտի, նմոնապէս և փոնքն Հաղբառու Միայն մարթ է առել թէ Սանահին \*\* ) կայր ի գաւառու Տաշրաց: իսկ Հաղբառու արտաքոյ Տաշրաց ի գաւառու Կայենոյ կամ Զորագիորի որովէս ցուցանէ Հրովարտակ Սմբառաց արքայի որդւոյ Աշոտոյ Աղորմածի յանուն Աանահնոյ վանից 979 թուին: Ըստ այսմ համաձայն հն և բոնք Կիրակոս Պատմ. զի տեղի բնակութեան մեծին Վարդանայ զնէ ի Կայենոն ի մենարանս որբոյ Անգրէի հանդէպ անմատչելի բերդին Կայենոյ առելովն՝ առեալ զայս զիր հաւանութեան իմաստնոյն վարդապետին Վարդանայ առափէ առ կաթողիկոսն Կոստանդիին ի Ալայն Հռովմէական, և ինքն եկեալ ի Կայենոյ ի մենարանն իւր, զոր սուրբ Անգրէ կոչէին, հանդէպ անառիկ բերդին Կայենոյ (յԱթուիկ) և անգ գաղարեալ յուսուցանել զրազումն, որք աշտկերուին նմա վարդապետական բանին: Աւսուի բերդն Կայրան, մենարանն որբոյն Անգրէի և Հաղբառաձորն գտանելով ընդ իշխանութեամբ Կիւրիկեցւոց արքայից: անշուշա մարթէ ասել և Հաղբառ իսկ գտանիւր ի Կայենոն կամ ի Զորագիոր: իսկ թէ բերդն Կայենոն, կամ նոյն իսկ գտաւան գտանէ ին արդեօք ի Զորագիոր, զայսմանէ պարզապէս վկայէ Յովհաննէս կաթուղիկոս Պատմաբան յասելն իւր: Գան հասանեն ի Զորագիոր, և տեսանեն նախ զԿայանն կոչեցեալ բերդ յտիշտակեալ իշխանին Աահակայ: Աւրեմն Հաղբառ իսկապէս գտանիւր ի Կայենոն կամ ի Զորագիոր ի սահմանագլուխ նահանգին Գուգարաց հանգերձ Սեաւորդւովքն Զորագետի և ոչ թէ յՈւտի, ի Լոռի կամ ի Տաշրի: Ըստ սաորա-

(\*) Վարդ. Տիեզ. Պատմ. երես 122:

(\*\*) Հին Հայաստան երես 314:

զբովթեան Հ. Վ. Խնձրիծեանի իրաւամբ եզրակացուցանեմք: Ի՞է կայ այս ուխտ ոչ ի ևսի քաղաքին որ ի Տաշիր գաւառ Գուգարաց: այլ ի սահմանավերջս ևուլոյ ի հարաւոյ յարեելո որ ձգէր նու արտաքաց Տաշրաց մինչև ի սահմանո նոյն իսկ Աւտիոյ: կամ թէ պարտէ տսել տեղի վահացս էր ի մէջ երկուց սահմանակցաց ևուլոյ և Աւտի գաւառին ի Չորսափոր ի սահմանագլուխս Գուգարաց: վասն որոյ ոմանք յԱւտի գնեն և ոմանք ի Լոռի կամ ի Տաշիր: \*) Թաղեալ գանհամաձայն թի նո նախնի մատենագրաց մերոց պարզապէս սոսացուք թէ ոյժմ ևս գտանի վանդն Հաղբատայ ըստ զրից ի սահմանագլուխս Գուգարաց այդ մեան Քօրչոլուի գուռուտիին առանց փոփոխութեան ողինչ մասն ունելով ընդ Լոռւոյ և ընդ Տաշրաց և ոչ ընդ նահանգին Աւտիոյ: այլ ուզգակի ընդ Չորսափորն է վայր ըստ ընթացից Գերեզայ գետոյն: որ սահման հատեալ զոյ մասնէ ի Գուգար մինչեւ ցիսառնուրդո իւր ընդ Աւր գետոյն Տիփիսայ սահմանեալ երկրական տարածութեամբն:

Հաղբատ և Հաղբատեցիք բազում որեք յիշատակին ի թուղիթ-արն Գրիգորի կաթուղիկոսի Տղայի և Ներսիսի Լոմբրոնացւոյ առ Եւսն արքայ Հայոց: Արեւելեան վարդապետք ի նամականիս իւրիանց զՀաղբատ կոչեն Տաղբատազարդար և ի միջին զարու այնշտափ ծաղկեալ էր անուանի հոչակոս որ մենաստանն Հաղբատայ տ-սու մեական գիտութեամբ ճպնողակոս կենօք և ամենայն բարեկարգութեամբք մինչեւ Յովհաննէս կաթուղիկոս կոչէ զսա Հայր-պէտութեանց: Նմանապէս զրի ի յիշատակարանի մեկնութեան Սաղմասի Լոմբրոնացւոյն, թէ Գ. Ա. ոն արքայն Հայոց գովէր և յանձանձէր մանաւանդ քան զբաղում տեղին՝ զմեծ և զհոչակաւոր երկնահատասար սուրբ ուխտն զմայրավանքն Հաղբատ: յորում կամէր անմոռաց արձանացուցանել զինքեան յիշատակ բարի ի Քրիստոս նուիրօք և պատարագօք: Ի մէջն անդ ծԱ. զարուն այնշափ վայլէր սէր ճգնութեանց յուխտոն Հաղբատայ և Սանահնի:

(\*) Ճշմարտապէս մարթ է ասել: թէ սահմանք և տեղիք պյուղիկ Հայ-կական գաւառաց երբեմն ընդ բերման ժամանակին անցանէին յայս կամ յայն իշխանապետութիւն, զորոց բազմատեսակ փոփոխութիւնս տեսանեմք ցարդ յաշխարհագ. Մ. Խորենացւոյ և ի ժամանակագիրս մը. և երբեմն յանկարծ յատուկ գաւառ մի անկանիւր առ մի և յետ նորա առ միւս զաւառս. պյուռ մարթ է ուղղել զանհամաձայն զրութիւնս ժամանակագրաց մերոց:

մինչ Գրիգոր Մագիստրոս ի պատսախանելն իւր առ նամակս նոցա գերազանց իմն օրինակաւ սկսանի գովիել և նկարագրել զքաղաքավարութիւնո նոցա զարարապումն յիմաստասիրական արհեստա և մակացութիւնս զառաքինական վարս և զպանչելի ճգնութիւնս կրօնաւորելոցն ի մենաստանի աստ՝ ասելովն ։ «Զօրբազանից և զ' ի մարմնի անմարմնոցն հանդիսակցելոցն մի եղինարար կցորդութեամբ և յարատեական արտահանութեամբ մշտաշաբաժ ի գերակատարան խաչակցութեամբ վկայից և զմայրաքաղաքական բարեկարգութեամբ ի միտուն ընակելոց իմաստնից բոլոր արհեստից և մակացութեանց պարառելոց և յաստուածապեատական բանն միացելոց անընդմիջաբար ։ . . . . և թէ պարտ է ասել հարց մերոց և եզրարց ընկողայ զզիր։ » Յետ այսօրինակ վսեմ տիտղոսի սկսանի գեղեցիկ իմն նկարագրել զճգնութիւնս նոցա ցանկացողք կարեն ընթեռնուլ զայն ի թուղթս նորին Գրիգորի Մագիստրոսի։

Այժմեան հին աւերակքն Հաղբատայ քարոզեն անլուռ լանիւ թէ ի հնումն պահայր այս զիւղ իւրով հարստութեամբ ճոխութեամբ և բազմամարդութեամբ մինչեւ երեմն ունանց յարքա յից մերոց և յականաւոր իշխանաց հաճեալ վասն բարեխառն օդոյն և առողջարար ջրոյն շինեցին աստանօր զամարանոցո իւրեանց և անցուցին աստ զամառն ող ջայն որպէս թագուարքն Աքաս Սմբատ Գուրգէն Գաւիթի և Կիւրիկէ թագուհիք Խոսրովանոյշ Թամար Մարիամ Ռուսու գան և Բաւրինայ նուե հոչակաւոր սեպուհ իշխանքն արտն Ամերէզ Սաղոն Գրիգոր Ամիրոց Քուրդ Ամիրայ Պածած իշխան արքայազն Ծիթլուսար Վասակ Սմբատ Զարէհ և այլք իսկիպըն ձթ զարութ ընակեցան աստ առժամանակ վասն ամբութեան տեղույն Սարգիս կաթողիկոսացեալն Ազու անից և երջանկայիշատակ հոգելոյս Եփրեմ կաթողիկոս ամենայն Հայոց հանդերձ ականաւոր եպիսկոպոսօք և երեւելի իշխանօք Որպէս պահպախիս Եկաց տառ յաւուրս իմ զամիսս վեց գիտնական վարժապետ Յարութիւն վր դասպետն Ալամդարեանց որ յօտարութեան իւրում երգեաց զբաղում տաղս և զերգս ի վերայ ասլաբաղդութեան և տկարութեան իւրոյ բայց մինչեւ ցարդ ոչ ոք յաւագաց մերոց յահձն Էառ տպագրութեամբ իլոյս ընծայել զբովանդակ քերթուածս նորա տռանձին մատենիւք։

## ՅՈՒՆԻՎԵԼՈՒ Ք.

ԱՆՑՔ ՀԱՐՈՒԹՅՈՅ ՀԱՂԲԱՏՈՅ.

Թէպէտ յունիմք զստոյգ լիխասանական տեղեկութիւն վասն անցից անցելոց ի Հազրատ ի Հին հեթանոսական ժամանակու, սակայն իսկապէս տեսանեմք, թէ առփարակ դաշտավայրն Հաղբատայ լի է եղեալ ի Հին գտրա բազմամարդ բնակչօք, որք վարեալ են սատ դհեթանոսական կեանս: Սառւզութիւն բանիցս ապացուցնեն այժմեան բազմաթիւ սոռւար և սալահերտ գերեզմանքն հոկայից (օղուզի) հեթանոսաց, ղորս ի 1873 ամի Պ. Ա. Երիցեանց քննողական մաօք բացեալ եզիտ ի մէջ բազմաց զաշոյն նետ, ապարանջան, ողնձեղէն օղեակ, և զանողան տեսակ իրս զարգուցնաեւ խեցեղէն և ողնձեղէն ամանս, բաժակ, ջրաման կողիտ և նրբածեւ շինուածովք: Բատ հին սովորութեանց նախնի հեթանոսք զայսողիսի նիւթեղէնս թաղէին ընդ մեռելոյն ի գերեզմանի: Այսոքիկ հին հեթանոսական գերեզմանք գտանին այժմ երկարաձիգ տարածութեամբ ի կողմանս հիւսիսոյ, հարաւոյ և արեւմտից փոքր ինչ հեռի ի վանիցն: Այժմ եւս զիւղականք մեր ի փոքրելն պատահմանք զգերեզմանատեղիս վասն շինութեանց, գտանեն բազմիցս զանազան անօթս, նիւթեղէնս և զգրամս: Հաւանական թուի, թէ այժմեան զիւղն նաեւ վանքն իսկ կառուցեալ են ի վերաց գերեզմանատեղեաց կամ մեհենատեղեաց, ղորս սպաշտէին նախնի Հաղբատեցիք ի ժամանակու հեթանոսութեան, բայց քարոզիչք քրիստոնէութեան խապառ անհետացուցեալ են զյիշատակս և զմեհեանս նոցա, միմիայն քանի մի կոսիտաշէն հնաձեւ կիսաքանդ շինուածք թէ ի գաշտու, ի լերինս, և թէ ի ձորս՝ ցուցանեն զձեւակերպութիւնս մեհենից: Թողցուք զհնութիւնն մնալ ի խորս մթութեան հնոց գտրուց, ուտամեսցուք զնոր անցիցն Հաղբատայ ի ժամանակու քրիստոնէութեան:

Խոկզբանէ անտի քրիստոնէութեան պէսոյէս մեծամեծ թշուառութիւնս կրեաց Հաղբատ, որպէս և այլ ամենայն շրջակայ վայրք նորա յարշաւանաց հինից բռնակալ աղանց և բազում անգամ թափուր մնաց ի բնակչաց և աւերակ իսկ: Եշրջակայս Հաղբատայ տեսանին այժմ աւերակք աւելի քան երկուասան զիւղօրէից, զորոց յետոյ գրելոց եմ: Այսոքիկ տւերակը են ըստ մեծի մասին յանմատցելի տեղիս, որք երախտաւոր համարին այնու՝ զի

պահպանեալ են զբնակիչո խրեանց իրանութենէ ելուզակաց միջին դարու, յորոց զմի քանիսն յիշեցուք աստանօր։ Յամին 1105 (Եթի.) Խըղիլ անուն ամիրաց Սկիւթացի բռնաւոր էս ու զԼուսի և զուռը ու իսոն Հաղբատ և զՊահաշին, որոյէս զրեն Ամիրակոս և Սամուէլ Պատմագիրք։ յորոց իմիում օրինակի յաւելութէ և այրեաց։ «Զայսոսիկ ամս (ասէ Ամիրակոս) մարտիւ պատերազմի զբարեյաբարտութիւն աշխարհի իրաց կտրեցին . . . . հոսմանս արեանց իբրեւ զուխիչ լինէր ոչ միայն զինակիր նահատեկաց այլ և առհասարակ աղանց և գաւառաց։» Խթղին Հայոց Ա. (1151) յարախնդիր աղզն Խորազմեանց հրամանաւ Զալալէկինի և յաջորդաց նորին տարածեցին զիշխանութիւնս խրեանց մինչ ի կողմանս Վերին Հայաստանի, ահ և երկիւղ կալեալ ունէր յայնժամ զՀաղբատ, մինչ ոչ գոյր տեղի ապաստարանի ժողովոց և վասն պահպանութեան որրոյ Նշանին, որովէս յիշէ Յով Համնէս առաջնորդ Հաղբատայ յարձանագիրս խր, թէ և ի ժամանակօ՝ որ եհատ սասանումն աշխարհիս մերոյ յանուրեն Խորազմեանց, ոչ գոյր տեղի ապաստանի սուրբ Նշանիս և եղբարցու . . . շինեցի զամրոց (այն է Դրսէվանիքն) և զեկեզեցիս Հաղբատայ սուրբ Նշանիս բաղում աշխատութեամք։» Յետ երեսուն ամաց անցելոց զօրացեալ աշխարհաւեր բանակալաց՝ տիրեցին աշխարհիս մերոյ ի թուին Հայոց (ՈՒ) 1181 ի ժամանակս յաղթօղ թագաւորին Կէորդայ և յԱմիր-սպասալարութեան Խարզսի և որդւոց իւրոց Զափարէի և Խվանէի և յամիրութեան քրդին, յոյժ տռաւելան Հարկապահանջութիւնք որ եղեւ պատճառ թշուառութեան բնակչաց և վանօրէից։ Որովէս զրէ միւս Յովհամնէս առաջնորդ յարձանագրութեան խրում յասելն՝ «յաւուրս սոցա կրթին աղատեցան եկեղեցիք մեր յամենայն Հարկէ»։ Խժամանակս իշխանութեան Նահնշահի տիրողին Լոռւոյ քաղաքի ի ԺԿ. գարուն Մողալ-թաթարք պաշարեալ զքաղաքն Լոռի բրելով զներքին հիմունս նորա կորձանեցին, յորժամ անհոգս կային բնակիչքն, զբազմութիւն քաղաքացւոց կոտորեցին . . . յաւարի արարին զգանձս իշխանին Նահնշահի՝ տիրապետողի երկրին, և ոռնակոխ արարին զբոլոր նահանգս նաև զՀաղբատ։—Խթղին Հայոց (ԶԿԴ) 1315 որովէս Սահաշին նոյնպէս և Հաղբատ կրեցին զմեծ թշուառութիւնս որովէս երեւի յարձանագրութեանց Ամիր-սպասալար Միարգրձէլի (երկայնաբազուկ) որդւոյ Նահնշահի։

« Յայում ժամանակ տեսի զերիլիր աւերեալ, գիւանն քառ, տեղա  
մնամիտ զրգանք, որ ի մուհասիլաց և յառաջնորդէ և յայլ հար-  
կոց աւերած էր, զեւեղեցիքո քանգած, զայս խաւար տեսաք,  
մաշու չափ արտմեցաք, որ աւագ Զատկին վարդապետներին քաշ  
էին արարեալ և այլ շատ նախատինք, ... եկի ի վանս ընդ ամուս-  
նոյն իրոյ, ուխտ եգաք Աստուծոյ և սուրբ Աստուածածնիս եկեղե-  
ցիքո հաստատեցաք, ի հորիէ ազատեցաք, որ այսուհետեւ ոչ մա-  
հանիլ և ոչ հարկապահանջ Սանահնիս չմնանէ և այս բանիւս  
արձակեցաք զմիաբանքո, և միատեղ ժողովեալ հաստատեցաք » :

Հուսկ ուրիմն չհազհետէ զմբոր գառնութեանց արբույին և օ  
հայկածին որդւոցն Զորագետի ի 1387 ամի Նանկ-թամուր, ի 1604  
Նահ - Աբրաս Ա., ի 1736ն Նազիր-Նահ, սոքա սուր ի ձեռին ա-  
սեալ մտին ի Հայաստան, արեամք ոզողեցին զաշխարհ մեր, գոր-  
ծելով զորածութիւնս և զնորանոր աւերութիւնս։ Ի Ժամանակի  
այսմիկ յիրաւի կատարեցան բանք Թավմայի Մեծոփեցւոյ « թէ  
որդիքն Եզիպտացւոց ի ծովն ընկվմեցան իսկ որդիքն Հայոց ի ծով  
անհաւատութեան։ » Ապա Օսմանցիք տարածեցին զրազուկս իւ-  
րեանց ի վերայ Հայաստանի տանջանօք և հարկապահանջութեամք  
հասուցին զհայկազեանս մինչեւ ցգուռն մահուան, և առաւել  
քան զամենհեսին անիրաւարար զեղեռնութիւնս և զիէրս անիրո-  
ւմելիս գործեցին աւնելովն տասանորդս ի մանկանց, զմին ի տա-  
սանց գրեալ ի զինուորութիւն՝ զարձուցանեին ի կրօնս իւրեանց,  
յորոց ելին, Մահլը-է+ Եզիպտոսի։ Այսօրինակ թշուառութեամք  
հարաւային զառնաշունչ հողմն թարշամեցայ ի ծզօտի զծազիկս  
բարութեանց Հայաստանի և ամենայն գաւառաց նորա։ Տեսցուք  
ապա զի՞նչ ևս գործեցին ի հիւսիսոյ Կաւկասեան լեռնականք և  
դրայի բունակալք և ոյլակրօն թագառորք։

Եհա հարաւային արեանարբու բռնակալաց ի պատեհ ժամու  
մուտ գործեցին ի հիւսիսոյ Կաւկասեան ազինք ի Զորագետո մեր  
հրով և սորով յաւեր գարձուցանել զայն։ Մերունիք մեր զեռ ևս  
յիշեն զամեհի արձակումն Օմար-խանին Աւարիոյ ի 1772 ամի  
30,000 հատընտիր լեկզի զօրօք, որ ոսմակոխ արարեալ զԱրաս-  
տան և զբոլոր նահանգո Բօրջալուի՝ եհաս մինչեւ ի հարուստ յու-  
նաբնակ գիւղն Աղտալի, կոտորեաց զբոլոր բնակիցս Հանքատեղ-  
ւոյնց որք ամրացեալ էին յեկեղեցւոջ անգ, ապա խուռն բազմու-  
թեամք ասպատակ սփուեալ ի Զորագետն ի վեր, գերի արարեալ

զբաղմութիւնս ժողովրդոց էած ի Դաղստան։ Յօրէ աստի բաց էր առաջի Նեկզաց գուռն մոտից ի Հայրածան, որը խմբավիճ առպատակ ոփուեալ ի Զորագետս և ի Գեղարքունիս, աւերեալ զգիւզօրայս և զբնակիչս՝ վարէին ի Դաղստան։ Նեկզիք ի սկզբան ժէ։ դարուն խաղառ աւերեցին զշաղբատ, արարին զայն իրեւամնայի անապատ և մնաց թափուր ի բնակչաց մինչեւ ց1776 ամն։ Ճվճրվան գիւղն է ճշմարիտ պատմաբան զարշաւ անտցն Նեկզաց, որք գաղանաբար քարշէին ի գեղջէ աստի զքրիստոնեայս ի գերութիւն։ և նոքա գոռալով գոչէին, ճշէին, ճվճրվային, աւստի գիւղն այն ի պատճառէ աստի կոչեցաւ Ճշլէն։ Նեղոց գիւղն ի վեր քան զհունն լեկզաց առ Դէքէւայ գետով էր տուածին ամբոցաբերդն Հաղբատեցւոց վասն ունելոյ զառաջու արշաւանաց լեկզաց ի սահմանս Հաղբատայ։ ի 1770 ամի ի մերձակավայրու նեղոց գեղջ ըմբռնեցաւ ազգականն նամիսալին Թարզօյի Մուրտգ նահ անուն, որ աւաղակութեամբ վեր ի վայր արար զնահմանզա Բօրչալուի։ ուստի և հրամանաւ Հերակլ արքայի խեղզամահ եղել ի նուլաւէր գեղջ։

Ի պատճառս ալէկոծ խռովութեանց Պարսկաստանի (1760 ց1795) Վրաստան կարաց ունիլ առժամանակ զանկախութիւն։ Թագաւորութիւնն Հերակլեայ եղեւ թատրոն պատերազմոց մերթ ընդ Պարսից և մերթ ընդ իսանիցն՝ Նախիջեանի, Երևանայ և Վարարաղու և այլոց որսց պատճառաւ սպառեցան զանձք արքունի։ ուստի ի 40,000 վարձկան զօրաց մին ի չորից հազիւ մընաց ի զինուարութեան, իսկ այլքն զէնընկէց լեռլ խնդրէին զվարձս, և առ ի չգոյցէ դրամաց վարձկան լեկզիքն արարին զյափշտակութիւն ի տեղիս անդիս Վրաստանի մինչեւ անգամ և ի Թիֆլիզ քաղաքի։ Հերակլ արքայ գովելի յատկութեամբ իւրով ոչ կարաց գաանել զհնարս բարւոքելոյ զվիճակ ժողովրդեան իւրոյ։ միմիայն որսնէր նա զիառս և զբարօրութիւնս վասն ժողովրդականաց իւրոց ի մէջ պատերազմայ, այլ ի զուր։ ի 1769 ամի արքայն Հերակլ անցեալ ընդ Զորագետն խաղաց զօրօք ի վերայ Հուաէին Ալի - իսանին Երևանայ և ոչինչ օգուտս քաղեալ ի ուստի աւերազմաց անափի վերատին փութեայաւ ի քաղաք իւր։ Ներքին և արտաքին թշնամիք առ իւծաբար գոչէին յարձակիլ ի Վրաստան և բոլորովին բառնալ զիսաղազութիւն երկրին։ Ուստի առ ի ամբացուցանել զսահմանագլուխս՝ հաստատեաց առսնձնակի զքա-

ուեակ կողմնակտու, և զՀարաւային սահմանագլուխն Սոմիւէթ ետ անդրանիկ որդւոյ իւրում Գէորգայ ընդ վիեսային իւրոյ Դաւիթի Օրբէլիանի, որք տպա ի մտի եղին անկախ զիրերաց տիրել համայն Առմիւէթի. վասնորոյ յաւել առա ի նոյն պաշտօն զմիւս վեսայ իւր զինիազն Մուխրանու: Ի մէջ երից կողմնակալացս Առմիւէթի անհամաձայնութիւնն ծնանէր օր ըստ օրէ տժգոհութիւնս և զանկարգութիւնս: Թէպէտ վիճուկ այսոցիկ կողմնակալացս խոնարհեալ էր յարեմուտս, բոյց այնու ամենայնիւ առժամանակ կարգեցին նոքա ևս ի վերայ սահմանագլուխ զիւղօրէից Հայոց ի վերին Քօրչալուի զամանս յիշխանաց Վրաց: Ի Հայ Մելիքաց և ի Քալանժարաց իբրև տանուտէր կամ վերատեսուչ զօրավար ի խառնափնթոր ժամանակին յաղազս զառաջս ունելոց ժողովրդականքն յարձակմանց թշնամեաց ի հարաւոյ:

Յետ աւերման աշխարհին Վրաց ի Պարսիկ Աղա - Մահմադ - խանէ (1795) ամսոյիւ մնաց հոչակառոր մենաստունն Հաղբատայ որպէս երեւի ի գրուածոց Յովսէփ կաթուղիկոսի Արկայնաբազուկի Արզութեանց յասելն «ի թվին Հայոց ՌՄԽ (1795) հրամանաւ կայներուհւոյն Քուսաց Եկատարինէի ընդ զօրաց նոցին եկի ի հայրենի աշխարհն իմ սուկս օգնականութեան և չոքայ յերկըրպագութիւն վանօրէիցն Հաղբատայ և Սահահնի, տեսի զամայութիւնս նոցին միսկաեցայ ի վերայ նոցին: Յօրէ անտի սկսանի հաստատ միաբանութիւն Հաղբատայ վանից:

Առն ազատութեան Հայաստանի վերջին պատերազմն Ռուսաց ի 1827 ամի ընդ Պարսից, առաջնորդութեամբ Պասկե իշ զօրավարին չեղեւ զիւրատար վասն Հաղբատեցւոց: Թուքքը Վաղարի, Քօրչալուի և Նոմշտղինոյ յորդորակոն բանիւք պետացն Պարսից զէն ի ձեռս առեալ աւաղակաբար յարձակեալ յափշտակէին զինչս Հայոց: Աւերէին զգիւզս և չարագործութեամբ դառնացուցանէին զվիճակ բնակչացն Զորագիտացւոց և յամենայն գէպս չքմեզո լեալ՝ պատճառ վնասուց գնէին ի վերայ Հատուածոյ զօրացն Պարսից, որք յանկարծուատ աստ և անդ առնէին զչարագործութիւնս: Յայնմ խառնակ ժամանակի հոգելայս սրբազան Եփրեմ կաթուղիկոսն ամենայն Հայոց առեալ զմիաբան եղեարս՝ ելեալ ի Ա. Էջմիածնէ՝ եկն ի Հաղբատ վասն ապահովութեան, յուսացեալ յանմառչելի ամրութիւնս տեղւոյն եռ և ի քաջութիւնս զինավառեալ բնակչացն Հաղբատեցւոց: Բազումք ի

Ուստի որիկայիշ խմացեալ զգալուստ Վեհափառ Կաթուղիկոսին, զյաջող դէպո գտեալ յարձակեցան յափշտակութեան աղագաւ ի Հոգրատ, և եթէ հնար ինչ իցէ ունիլ զիաթողիկոսն Եփրեմ և ածել առ արբայրդին Պարոից Աբբաս - Միրզյ, բայց Հաղբատեցիք արիարար զդէմկալեալ յարձակմանց նոցա՝ գարձուցին զնոսա ի փախուստ, այլ անիրաւքն ի փախստեան իւրեանց յարձակեցան ի վերայ սեպհական գիւղին Հաղբատայ վանից Մալշայ աւերեցին, և զրադումն ի բնակչաց վարեցին ի գերութիւն:

Յաւարտ վիստառական անցիցն տեսանի աւաւել քան զամենայն հնութիւնս, որք գտանին ի Հաղբատ, թէ օրհնութեամբ և թէ շքեղութեամբ գերազանցութիւն աշխարհաչափակ վանցիցն Հաղբատայ յանուն Սուրբ Նշանի. զորս արդար և արժան է մանրամասն նկարագրել դնելով կարգ ընդ կարգի ի սոսրեւ դարձանագրութիւնս խրաբանցիւր եկեղեցեաց համեմատ բուն և գեռ ևս անջինց փորագրեալ արձանացն:

$$\left( \frac{1}{4} \leq z - p \leq \frac{3}{4} \leq \frac{1}{2} \right).$$

Թուստամ՝ Բէկ Երդնկեանց:

## ԲԱՆԱԼԻՐԱԿԱՆ

ՀՐԵԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԸ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՒ ՕՐԵՐՈՒ

( 6 - 1 - 2 - 1 - 1 - 1 - 1 , 0 . 1 - 1 - 1 - 1 - 1 - 1 )

Միայն տէրութեան մայրաքաղաքում բնակուող հրեաները չեին: որ վայ-  
յելում էին հոսպմէական քաղաքացիութեան իրաւունքը, այլ միենոյն ար-  
տօնութիւններով կարող էին պարծենոլ և Փոքր Ասից շատ հրեաներ: Ա-  
սորիբի Սելևկեան շատ տեղերում նոցա միենոյն արտօնութիւններն էին  
պարդեհ: Այդ պատճառով նոքա շատ տեղերում երկօրինակ իրաւունքներ  
ունեին, — մէկը հոսպմէական քաղաքացիութեան, միւսը ասիական քաղա-  
քացիութեան իրաւունք և արտօնութիւն: Առաջին տեսակի իրաւունք վա-  
յելողները կարող էին իրեանց քաղաքական վարչութիւնն ունենալ՝ իր-  
եանց կողմից ընտրուած ազգունաժի տեսչութեան տակ և բատ ամենայինի ա-